ՄԵՂՄ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԱՅԻՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

ԲԵՔԱՐՅԱՆ Լ. Ա.

Ինչպես գիտենք, մարդու հասարակական գործունեությունը բազմաբնույթ է և հակասություններով լի, հետևաբար հաղորդակցման ընթացքում զրուցակիցները կարող են ունենալ ոչ միայն իրար հետ համագործակցելու ցանկություն՝ դրական դիրքորոշում, ընդհանուր շահեր և նպատակներ, համահունչ համոզմունքներ և տեսակետներ, այլև իրար հակառակվելու հակում՝ բացասական դիրքորոշում, հակասող շահեր, իրարամերժ տեսակետներ և այլն: Այս հանգամանքը, անշուշտ, իր ազդեցությունն է թողնում հաղորդակցման գործընթացի վրա: Եվ եթե դրական դիրքորոշման առկայության դեպքում հաղորդակիցների միջև ձևավորվում են կանոնավոր միջանձնային հարաբերություններ, իսկ հաղորդակցման գործընթացը բնականոն է ընթանում, ապա բացասական դիրքորոշման առկայության դեպքում տեղի է ունենում զրուցակիցների հաղորդակցական նպատակների բախում, որի հետևանքով էլ նրանց ներդաշնակ համագործակցությունը դառնում է անհնար: Նման խոսքային իրադրություններում զրուցակիցների միջև ծագում է հակամարտություն (կոնֆլիկտ):

Որպես հաղորդակցման անքակտելի մի մաս՝ հակամարտությունը դրսևորվում է խոսքում և ունի գործադրման իր յուրահատուկ մեխանիզմը: Այսպես, լեզուն գործածելով ոչ միայն զուտ տեղեկատվության փոխանակման, այլև զրուցակցի վրա փոխազդելու, վեր-ջինիս հետ որոշակի փոխհարաբերություններ հաստատելու կամ արդեն իսկ ձևավորված հարաբերությունները կարգավորելու նպատակով՝ հաղորդակցման մասնակիցները հաճախ «չարաշահում» են այն՝ դարձնելով յուրօրինակ մի «գործիք»՝ միմյանց նկատմամբ իրենց բացասական դիրքորոշումը կամ թշնամանքը արտահայտելու, զրուցակցի տեսակետին հակասելու, նրան վիրավորելու և այլ հակամարտ նպատակներով:

Հակընդդեմ հաղորդակցությունը, որպես խոսքային համագործակցության մի տեսակ, տարասեռ է և բազմաբնույթ: Միջանձնային հակամարտություն ներկայացնող իրադրությունների ուսումնասիրությունը բացահայտում է, որ կոնֆլիկտային խոսքային վարքագիծն ունի աստիճանական սաստկացման հակում. այն կարող է սկիզբ առնել թույլ, աննշան անհամաձայնությունից և հանգել ընդհուպ թշնամական ընդհարման:

Սույն հոդվածի նպատակն է բնութագրել մեղմ հակամարտության հիմնական դրսևորումները ժամանակակից անգլերենում, ինչպես նաև բացահայտել դրանց սոցիալ-հոգեբանական և գործաբանական առանձնահատկությունները: Հետազոտված փաստական նյութը ժամանակակից անգլոամերիկյան դրամատուրգիայից քաղ-

ված ընտանեկան մեղմ հակամարտության խոսքային իրադրություններ է ներկայացնում:

Ուսումնասիրությունների շնորհիվ պարզվել է, որ մեղմ հակամարտությունը սկիզբ է առնում որպես հակամարտող կողմերի անցյալում տեղի ունեցած որևէ տհաճ միջադեպի կամ իրադարձության արձագանք, համատեղ աշխատանքի կամ միջանձնային հարաբերությունների տհաճ կենսափորձ, որը բացասական ներգործություն է թողել հակամարտող կողմերից մեկի վրա: Մեղմ հակամարտության դրդապատճառ են հակամարտող կողմերից մեկի թույլ տված այն արարքները, որոնք սովորաբար կարող են վնասել զրուցակցի համբավին, սպառնալ նրա հեղինակությանը կամ հասարակական դիրքին, ինչպես նաև սահմանափակել նրա ազատությունը: Մեղմ հակամարտության մեջ կողմերից մեկն է նախահարձակ լինում և ստանձնում բողոքողի, մեղադրողի, կշտամբողի կամ սպառնացողի դեր, իսկ մյուսը փորձում է արդարանալ կամ պաշտպանվել՝ առանց պատասխան հարձակում գործելու: Այդ իսկ պատճառով հակընդդեմ երկխոսությունը սովորաբար սկիզբ է առնում զրուցակիցներից մեկի ներկայացրած անուղղակի բողոք, մեղադրանք, նախատինք, կշտամբանք, սպառնալիք կամ զգուշացում արտահայտող խոսքային իրողություններից:

Ստորև ներկայացված օրինակը բացահայտում է նման մի դեպք.

Cora: I wish you were home more, Rubin.

Rubin: I gotta make a livin'.

Cora: Other men make a living without traveling all over country selling harness.

Rubin: The way other men make a livin' is their business. I gotta make mine the best way I know how. I can't be no schoolmaster like your old man was when he brung you all out of here from Pennsylvania. I can't be no dentist like your brother-in-law Morris. I was raised on a ranch and thought I'd spend my life on it. Sellin' harness is about all I'm prepared for … as long as there's any harness to sell[1].

Ներկայացված հակընդդեմ երկխոսության պատճառը ամուսնու հաճախակի բացակայությունն է, որը դուր չի գալիս կնոջը: Ամուսնական հակամարտության առաջացմանը նպաստում է նաև այն հանգամանքը, որ ամուսիններն ունեն տարբեր կրթական մակարդակ և հասարակական դիրք, և, հետևաբար, ամուսնական կյանքի վերաբերյալ ունեցած նրանց պատկերացումները տարբեր են: Ամուսինն անկիրթ է, սերում է հասարակության ցածր խավից. դրա մասին են վկայում նրա խոսքում տեղ գտած ժողովրդախոսակցական ձևերը [gotta, brung, can't be no, livin', sellin'], ինչպես նաև կնոջ հարազատների հասարակական դիրքին, կրթական մակարդակին վերաբերող նրա անընդմեջ հեգնական արտահայտությունները [I can't be no schoolmaster like your old man … I can't be no dentist like your brother-in-law Morris]: Կնոջ խոսքը հղկված է և զերծ ժողովրդախոսակցական լեզվին հատուկ ինչյունաբանական աղավաղումներից և քերականական սխալներից: Ակնհայտ է, որ սույն հակընդդեմ երկխոսության

[1] **Inge W.** *The Dark at the Top of the Stairs. Best American Plays 1958-1963, N.Y., Crown Publishers, Inc., 1963, pp. 107-108.*

մեջ ամուսնու երկարատև բացակայությունը զուտ պատրվակ է, մինչդեռ հակամարտության իրական աղբյուրը պետք է որոնել կողմերի միջև առկա կրթական մակարդակից և հասարակական դիրքից բխող տարբերությունների մեջ:

Որոշ դեպքերում մեղմ հակամարտության փուլը կարող է յուրովի «նախերգանք» ծառայել հակամարտության մյուս փուլերի համար: Ինչպես արդեն նշել ենք, դրան կարող են նպաստել մի շարք այնպիսի գործոններ, ինչպիսիք են հակամարտող կողմերի դիրքորոշումը, նրանց մարտական տրամադրվածությունը և ռազմավարությունը: Այսպես, հետևյալ օրինակում մեղմ հակամարտության փուլը ավարտվում է պառակտմամբ:

Nancy: I want a new life. I want to go discothequing and skiing and to the beach. I want to drive through Europe on a motorcycle. All we ever do is see movies.

Allan: I write for a film magazine, they send me. Besides, I happen to like movies.

Nancy: You like movies because you're one of life's great watchers. I'm not like that. I'm a doer. I want to participate. I want to laugh. We never laugh together.

Allan: How can you say that? I don't know about you, but I'm constantly laughing – I chuckle, I giggle, I guffaw occasionally ...

Nancy: Good-by Allan. My lawyer will call your lawyer[2].

Այստեղ հակընդդեմ երկխոսությունը ծագում է կնոջ նախաձեռնությամբ և ունի միակողմանի բնույթ: Թեև հակամարտող կողմերը սերում են հասարակության միևնույն խավից, կրթված են, նրանք ներկայացնում են միանգամայն տարբեր հոգեբանական տիպեր: Այսպես, եթե ամուսինը, կնոջ բնորոշմամբ, դիտորդ է [watcher], ապա կինն իր բնույթով գործուն է [doer]: Սա էլ նրանց միջև ծագած հակամարտության պատճառն է: Կինն անուղղակիորեն մեղադրում է ամուսնուն, որ վերջինս չի կարողանում նրա կյանքը հետաքրքիր դարձնել: Ինչպես և առաջին օրինակում, այստեղ էլ կնոջ խոսքն անուղղակի մեղադրանք է պարունակում, իսկ բացասական վերաբերմունքը արտահայտվում է քերականական եղանակավորման միջոցով՝ սահմանական եղանակի ներկա անորոշ ժամանակաձևի, առաջին դեմքով կազմված հարակից շարույթների միտումնավոր կրկնությամբ [I want a new life. I want to go discothequing and skiing and to the beach. I want to drive through Europe on a motorcycle]: Ամուսինը փորձում է մեղմել կնոջ զայրույթը՝ արդարանալով նրա առջև: Շարունակելով կոնֆլիկտային վարքագիծը՝ իր հաջորդ ռեպլիկում կինը դարձյալ նախընտրում է սահմանական եղանակի ներկա անորոշ ժամանակաձևով արտահայտված բացասական երանգավորման արտահայտչամիջոցը՝ այն զուգակցելով բառային եղանակավորման հետ: Այսպես, նրա խոսքում իմաստային հակադրական կապ է ստեղծվում doer, watcher, you're, I'm not, I, you խոսքային միավորների միջև: Կշտամբանքը իր գագաթնակետին է հասնում We never laugh together ասույթում, որին գումարվում է նաև հնչերանգային բացասական եղանակավորումը՝ never ժխտական եղանակավորողի շեշտադրմամբ:

[2] **Allen W.** *Play it again, Sam. Best American Plays 1967-1973, N.Y., Crown Publishers, Inc., 1975, p. 566.*

Ամուսինը վարում է հակամարտախույս ռազմավարություն՝ ձևացնելով՝ իբր չի ընկալում կնոջ կշտամբանքները: Ակնհայտ է՝ Նենսիի կշտամբանքները նրան շփոթության են մատնում: Դա են ապացուցում հուզական դադարը [I'm constantly laughing–], never ժխտական եղանակավորողին հակադրված constantly, occasionally սաստկական վերաբերականները, I chuckle, I giggle, I guffaw շարույթները, որոնք նույնպես սահմանական եղանակի ներկա անորոշ ժամանակաձևով են օգտագործված: Խոսքում Ալանն իր վրդովմունքը դրսևորում է հռետորական հարցով:

Մինչդեռ հակընդդեմ երկխոսությունը, կրկին կնոջ նախաձեռնությամբ, կտրուկ անցում է կատարում և ավարտվում պառակտմամբ. ընդհատելով ամուսնուն՝ կինը ապահարզան է պահանջում [Good-by, Allan. My lawyer will call your lawyer]:

Ինչպես արդեն նշել ենք, մեղմ հակամարտության փուլում հակընդդեմ երկխոսությունները կարող են սկիզբ առնել կողմերից մեկի՝ մյուսին հասցեագրված մեղադրանքից: Նման մեղադրանքի պատճառ սովորաբար կարող է լինել զրուցակցի արարքը, որը բացասական արձագանքի է արժանացել դիմացինի կողմից: Այսպես, հոր և զավակի միջև ընթացող հետևյալ հակընդդեմ երկխոսության մեջ որդին, իմանալով, որ եղբայրը հիվանդ է թոքախտով, անուղղակիորեն մեղադրում է հորը:

Jamie (turns on his father accusingly): It might never have happened if you'd sent him to a real doctor when he first got sick.

Tyrone: What's the matter with Hardy? He's always been our doctor up here.

Jamie: Everything's the matter with him[3].

Ինչպես և նախորդ իրադրության մեջ, այնպես էլ այս հակընդդեմ երկխոսությունում նշանակալից է հակամարտող կողմերի համ ատեղ իմացության դերը. Ջեմին, խուսափելով բացահայտ խոսել եղբոր հիվանդության մասին, գործածում է it դերանունը՝ դրանով իսկ կապ ստեղծելով ներկա իրադրության և անցյալում տեղի ունեցած իրադարձությունների միջև: Ջեմիի ասույթը անուղղակի մեղադրանք է, նրա բացասական վերաբերմունքը արտահայտվում է ներկա ձևով՝ քերականական եղանակավորման միջոցով [It might never have happened if you'd sent him to a real doctor when he first got sick.]:

Որդու՝ հոր նկատմամբ ունեցած քննադատական վերաբերմունքը արտահայտվում է նաև նրա շարժումներում [turns on his father accusinggly]: Որդին քննադատում է հորը ոչ միայն սխալ վարքագծի, այլև ժլատության համար [You didn't send him to a real doctor]: Այստեղ a real doctor շարույթն անուղղակիորեն ակնարկում է ընտանիքի հոր՝ Թայրընի ժլատությունը, որը նրան թույլ չի տվել ավելի պատշաճ ու բարձր վարձավճար պահանջող բժշկի դիմել: Դրանով բացատրվում է նաև որդու բացասական վերաբերմունքը բժիշկ Հարդիի նկատմամբ. ինչպես տեսնում ենք, Ջեմին որևէ օբյեկտիվ պատճառ չի ներկայացնում իր դժգոհությունը հիմնավորելու համար:

[3] **O'Neill E.** *Long Day's Journey into Night, Moscow, Progress Publishers, 1972, p.26.*

Չցանկանալով սաստկացնել լարվածության աստիճանը՝ նա խուսափում է ուղղակի մեղադրանքներից՝ բացասական եղանակավորման կիզակետը ուղղելով բժշկին [Everything's the matter with him]:

Հակամարտող կողմերը իրենց դերերով փոխվում են հետևյալ հակընդդեմ երկխոսության մեջ. մեղադրողի դերում արդեն հանդես է գալիս ծնողը:

Birling (angrily to Eric): You're the one I blame for this.

Eric: I'll bet I am[4].

Այս հակընդդեմ երկխոսությունն առանձնանում է նաև նրանով, որ մեղադրանքն այստեղ արտահայտված է արտակա՝ ուղղակի մեղադրանքի միջոցով: Հայրը բացահայտորեն մեղադրում է որդուն փողային մեքենայությունների մեջ: Սակայն նա նաև զուսպ է և զգուշավոր: Նման վարքագիծը թերևս կարելի է բացատրել այն փաստով, որ Բըրլինգը վախենում է այսպես կոչված հասարակական սկանդալներից, վիճաբանություններից՝ ենթադրելով, որ դրանք կարող են խոչընդոտել իրեն քաղաքական ասպարեզում հաջողության հասնելու: Ինչպես և նախորդ հակընդդեմ երկխոսություններում, այստեղ ևս կարևորվում է հակամարտող կողմերի համատեղ իմացությունը. այսպես, Բըրլինգը, խուսափելով որդու կատարած զանցանքը բացահայտ նշելուց, այն անվանում է this ցուցականով [You're the one I blame for this]: Չցանկանալով ներգրավվել հակընդդեմ երկխոսության մեջ՝ որդին չի էլ փորձում հերքել իրեն ներկայացված մեղադրանքը [I'll bet I am]:

Այսպիսով, մեղմ հակամարտությունը հիմնականում ծավալվում է զրուցակիցներից մեկի նախաձեռնությամբ և ուղղորդմամբ: Քանի որ հակամարտությունը երկրորդ զրուցակցի շահերից դուրս է, նրանց միջև ընթացող հակընդդեմ հաղորդակցությունը դրսևորվում է ներակա խոսքային միջոցներով, որոնք արտացոլում են զրուցակիցների հակամարտախույս՝ սուր հակամարտությանը չդիմելու ռազմավարությունը:

Խոսքում մեղմ հակամարտությունը հիմնականում արտահայտվում է սպառնալիք, նախատինք կամ կշտամբանք արտահայտող անուղղակի խոսքային իրողությունների կիրառմամբ: Նման իրողություններն իրենց բնույթով հակամարտահարույց են, քանի որ խոչընդոտում են հաղորդակցման գործընթացում նպաստավոր մըթնոլորտի ստեղծմանը և ստիպում այն մասնակցին, ում հասցեագրված է ասույթը, գրավել հարձակողական-պաշտպանական դիրք:

Քերականական մակարդակում մեղմ հակամարտության փուլում հատկապես գերակշռում են ըղձական եղանակի անցյալի ապառնիով կիրառվող կառույցները, որոնք օգտագործվում են խոսողի բացասական վերաբերմունքը խոսակցի՝ անցյալում կատարած սխալ արարքի կամ նրա անձի բացասական որակների նկատմամբ արտահայտելու համար: Տվյալ փուլում մասնակիցները հակված են նաև

[4] **Priestley J. B.** *An Inspector Calls. My Six Favorite Plays, N.Y., Stein and Day Publishers, 1979, p. 337*

գործածելու պայմանական եղանակի անցյալի ապառնիով գործածվող կառույցներ, որոնցում խոսողի բացասական վերաբերմունքը արտահայտվում է ներակա ձևով՝ որպես խոսակցի ենթադրվող զանցանքի քննադատման ձև:

Բառային մակարդակում մեղմ հակամարտությունը հիմնականում արտահայտվում է it, this, that ցուցականների միջոցով, որոնք հակամարտող կողմերը կիրառում են իրենց համատեղ անցյալում տեղ գտած որևէ տհաճ դիպված անվանելու փոխարեն: Միևնույն ժամանակ, խոսողն իր բացասական սուբյեկտիվ վերաբերմունքն ասույթի նկատմամբ արտահայտում է վերաբերականներով կամ մտածական եղանակավորողներով, ընդ որում՝ բացասական վերաբերականների դերում հաճախ հանդես են գալիս ոչ միայն առանձին բառեր, այլև կապակցույթներ և դարձվածներ: Մեղմ հակամարտության փուլին մասնավորապես բնորոշ են այն վերաբերականները, որոնք շեշտում են նախադասության զանազան անդամների բացասական գնահատականը և դրանք դարձնում նախադասության տրամաբանական կենտրոն:

Վերհատույթային մակարդակում, հատկապես գրավոր խոսքում, մեղմ հակամարտությունը դրսևորվում է հեղինակի՝ մեկնական ասույթում զետեղած հակամարտող կողմերի հուզական վիճակի, նրանց խոսքին հաղորդած յուրահատուկ ինչերանգի, հակամարտահարույց գործողությունների նկարագրությամբ, ինչպես նաև տրոհագծի և բազմակետերի կիրառմամբ, որոնց հիմնական նպատակն է արտահայտել հակամարտող կողմերի խոսքում տեղ գտած և նրանց ներքին հուզական վիճակով պայմանավորված հուզական դադարները:

РЕЧЕВОЕ ОТРАЖЕНИЕ СЛАБОГО КОНФЛИКТА В СОВРЕМЕННОМ АНГЛИЙСКОМ ЯЗЫКЕ

БЕКАРЯН Л. А.

Резюме

В процессе коммуникации участники используют язык не только как средство обмена информацией, но и как способ выражения доброжелательного, равно как и недружелюбного отношения к собеседнику. Имея разные мнения и взгляды, участники коммуникации часто нарушают нормы речевого поведения и вежливости, в результате чего между ними возникает конфликт. В зависимости от обострения или смягчения конфликтного поведения различаются следующие типы конфликтного диалога: слабые, средние и острые (сильные).